

**ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԷԴԳԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՍՊԸ-ին, «ՍԻԹԻ» ՍՊԸ թիվ 21 մասնաճյուղին, «ԾԻԱԾԱՆ» ՍՊԸ-ին, «Անդակո» ՍՊԸ թիվ 4 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ին «ՅունիոնՓեյ Ինթերնեյշնլ» (UnionPay International) արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու մասին 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ «Արարատ» ներկայացուցչությունը գրանցելու մասին 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ «Խորենացի» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը 1 փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու և նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ 3

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 21Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 18-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2023 թվականի չորրորդ եռամսյակ)» 4

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 19-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 5

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 20-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 7

Վիճակագրական ամփոփագիր 9

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ
ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ**

- **Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է** տրամադրվել «ԷԴԳԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 21 մասնաճյուղին, «ԾԻԱԾԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, «Անդակո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 4 մասնաճյուղին (որոշումներ թիվ 4Ա, 12Ա, 13Ա, 14Ա):
- **«ՅունիոնՓեյ Ինթերնեյշնլ» (UnionPay International) արքասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է** տրամադրվել «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 17Ա):
- **Գրանցվել է** «ԱԳՐՈԼԻԶԻՆԳ ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Արարատ» ներկայացուցչությունը (որոշում թիվ 1/2Ա):
- **Թույլատրվել է** «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Խորենացի» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/24Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի նկատմամբ **կիրառվել է տուգանք** 32 000 000 դրամ գումարի չափով, **հայտարարվել է նախազգուշացում** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/16Ա):

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2024 թ. հունվարի 30-ի թիվ 21Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 8.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լրմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 10.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 7.25%:

**23 հունվարի 2024 թվականի թիվ 18-Ն
Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին
(2023 թվականի չորրորդ եռամսյակ) ***

Նպատակ ունենալով ապահովելու ֆինանսական համակարգի կայունությունը,
ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ սահմանելով ռիսկով կշռված ակտիվների 1.5%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

* Ոչ պաշտոնական հրատարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2024 թ. հունվարի 23-ին (ՀՀԳՏ, 26.01. 2024):

**23 հունվարի 2024 թվականի թիվ 19-Ն
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007
թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և
լրացումներ կատարելու մասին***

Նպատակ ունենալով վերանայելու Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ պահանջների գծով սահմանված ռիսկի կշիռները,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 5-րդ գլուխը,

ընկալարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի Հավելված 3-ի 6-րդ կետի Աղյուսակ 1-ի 6.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6.5 Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր և Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ այլ պահանջներ	0	10
---	---	----

»,

2) Կանոնակարգի Հավելված 3-ի 6-րդ կետի Աղյուսակ 1-ի 6.4-րդ, 6.10-րդ, 6.11-րդ, 6.12-րդ և 6.28-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած,

3) Կանոնակարգի Հավելված 3-ի 6-րդ կետի Աղյուսակ 1-ի 6.25-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6.25 Պահանջներ Հայաստանի Հանրապետության վարկանիշին համապատասխան վարկանիշ ստացած Հայաստանի Հանրապետության համայնքների նկատմամբ	0	10
---	---	----

»,

* Ոչ պաշտոնական հրատարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2024 թ. հունվարի 23-ին (ՀՀԳՏ, 29.01. 2024):

4) Կանոնակարգի Հավելված 3-ի 6-րդ կետի Աղյուսակ 1-ի 6.27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6.27 Պահանջներ սույն Աղյուսակի 6.25-րդ կետում չնշված Հայաստանի Հանրապետության համայնքների նկատմամբ	100	150
--	-----	-----

»,

5) Կանոնակարգի Հավելված 3-ի 23.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. ապահովվածությունը Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթուղթ է, Հայաստանի Հանրապետության դրամով Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմս կամ այլ երկրների կենտրոնական բանկերի կամ կառավարությունների կողմից թողարկված արժեթուղթ, որը, համաձայն սույն հավելվածի 6-րդ կետի, վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 0% ռիսկի կշռով,»,

6) Կանոնակարգի Հավելված 3-ի 23.2-րդ կետի «ա» պարբերությունում «կառավարությունն է» բառերից հետո լրացնել «(եթե երաշխիքը կամ երաշխավորությունը տրամադրվել է ՀՀ դրամով)» բառերը,

7) Կանոնակարգի Հավելված 3-ի 23.3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23.3. Պահանջի ապահովված մասը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 10% ռիսկի կշռով, եթե՝
1) գրավը արտարժույթով Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմս է, և բավարարված են սույն հավելվածի 23.1-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» և «գ» պարբերություններով սահմանված պայմանները.

2) գործարքը միաժամանակ բավարարում է սույն հավելվածի 23.1-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» և «բ» պարբերություններով սահմանված պայմանները.»,

8) Կանոնակարգի Հավելված 3-ի 23.3-րդ կետը 2-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3-րդ ենթակետով.

«3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից արտարժույթով տրամադրվել է երաշխիք կամ երաշխավորություն:»,

9) Կանոնակարգի Հավելված 3-ը 43-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 44-րդ կետով.

«44. Սույն Հավելվածի 6.14.1-րդ և 6.25-րդ կետերը կիրառելիս հիմք են ընդունվում սույն հավելվածի 42-րդ և 43-րդ կետերով սահմանված սկզբունքները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 6-րդ և 8-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող վեցերորդ ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

**23 հունվարի 2024 թվականի թիվ 20-Ն
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002
թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություններ
կատարելու մասին***

Նպատակ ունենալով վերանայելու Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ պահանջների գծով սահմանված ռիսկի կշիռները,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածը,

ընկալարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի ««Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ը հաստատելու մասին» N 347-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի 23-րդ կետի Աղյուսակի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3. Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր, Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ այլ պահանջներ և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ապահովված պահանջներ	0	10
---	---	----

»,

2) Կանոնակարգի 23-րդ կետի Աղյուսակի 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

26. Պահանջներ Հայաստանի Հանրապետության վարկանիշին համապատասխան վարկանիշ ստացած Հայաստանի Հանրապետության համայնքների նկատմամբ	0	10
--	---	----

»,

* Ոչ պաշտոնական հրատարակություն:
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2024 թ. հունվարի 23-ին (ՀՀԳՏ, 29.01. 2024):

3) Կանոնակարգի 23-րդ կետի Աղյուսակի 28-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

28. Պահանջներ սույն Աղյուսակի 26-րդ կետում չնշված Հայաստանի Հանրապետության համայնքների նկատմամբ	4) 100	5) 150
---	--------	--------

»,

4) Կանոնակարգի 23-րդ կետի Աղյուսակի 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ և 29-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2024)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (<http://www.armstat.am>), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-592
Էլփոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
<http://www.cba.am>


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ	13
<i>Մակրոտնտեսական ցուցանիշներ</i>	
<i>Գնաճ</i>	
<i>Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին</i>	
<i>Բնականոն գնաճ</i>	
<i>Բնականոն գնաճին ամենամեծ նպաստումն ունեցող ապրանքատեսակները</i>	
Արտաքին հատվածի ցուցանիշներ	17
<i>Ապրանքների արտահանում և ներմուծում</i>	
<i>Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները</i>	
<i>Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք</i>	
<i>Հայաստանի Հանրապետության միջազգային պահուսպների կառուցվածքը</i>	
<i>ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը</i>	
Պետական բյուջեի ցուցանիշներ	22
<i>Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները</i>	
Դրամավարկային ցուցանիշներ	23
<i>Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ</i>	
<i>Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ</i>	
<i>ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ</i>	
<i>ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ</i>	
<i>Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում</i>	
Ֆինանսական շուկա	34
<i>Տոկոսադրույքներ</i>	
<i>Բանկային փոկոսի հաշվարկային դրույքը</i>	
<i>ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների փոկոսադրույքներ</i>	
<i>Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը</i>	
<i>Ռեպո շուկայի շրջանառությունը</i>	
<i>Առևտրային բանկերի կողմից փոխառությունից ներգրավված ավանդների և փրամադրված վարկերի ծավալներն ու փոկոսադրույքները</i>	
<i>Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից փրամադրված վարկերի փոկոսադրույքներն ըստ մարզերի</i>	
<i>Պետական կարծաժամկետ պարտավորումների առաջնային փեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը</i>	
<i>Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտավորումների առաջնային փեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը</i>	
<i>Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտավորումների առաջնային փեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը</i>	
<i>ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները</i>	
<i>Պետական (Գանձապետական) պարտավորումներում ներդրողների կառուցվածքը</i>	
<i>ՀՀ եվրոպարտավորումներով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները</i>	
<i>ՀՀ ԿԲ-ի կողմից արժույթային շուկայում իրականացված գործառնությունները</i>	
<i>Արժույթային շուկայում իրականացված գործառնությունները</i>	
<i>Արժույթային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը</i>	
<i>Արժույթային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/Եվրո միջին փոխարժեքը</i>	
<i>Արժույթային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը</i>	

Վարկային ներդրումներ	50
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների	
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության	
Առևտրային բանկերի այլ վարկային գործառնությունների գործիքակազմը	
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը	
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների	
«Ձ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը	
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների	
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության	
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը	
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը	
Առևտրային բանկերի ավանդներ	60
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների	
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ	62
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը	
«Ձ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը	
«Ձ առևտրային բանկերի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը	
«Ձ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը	
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը	
«Ձ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը	
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ	
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ	
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ	
Կառավարման վերցված միջոցներ	
Պահառության վերցված արժեթղթեր	
«Ձ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը	
Գրավատների ցուցանիշներ	
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ	
Վճարահաշվարկային համակարգ	71
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ	
«Ձ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ	
«Ձ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը	
«Ձ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները «Ձ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների	
«Ձ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում	

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2023 թ. դեկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2022 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)	2024 թ. հունվարի իրական աճի փոփոխությունը 2023 թ. հունվարի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	9.5	10.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալ	20.0	21.0
Շինարարության ծավալ	11.5	9.5
Առևտրի շրջանառության ծավալ	35.9	19.3
Ծառայությունների ծավալ (առանց առևտրի)	3.4	4.1
Էլեկտրաէներգիայի արտադրություն	x ¹	-6.3
Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձ	8.0 ²	8.2 ³



ԳՆԱՃ


ժամանակաշրջան	2021	2022	2023	2024
<i>Նախորդ ամսվա նկատմամբ (%)</i>				
Հունվար	2.2	1.6	1.4	1.2
Փետրվար	0.6	0.1	0.1	
Մարտ	1.0	1.8	-0.7	
Ապրիլ	1.3	2.3	0.1	
Մայիս	-0.4	0.1	-1.8	
Հունիս	-0.8	0.3	-1.4	
Հուլիս	-0.5	-1.4	-1.0	
Օգոստոս	0.4	0.2	0.1	
Սեպտեմբեր	-0.1	0.6	0.9	
Հոկտեմբեր	0.7	0.3	0.3	
Նոյեմբեր	1.7	1.1	0.5	
Դեկտեմբեր	1.6	1.1	0.9	
<i>Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)</i>				
Հունվար	4.5	7.1	8.1	-0.9
Փետրվար	5.3	6.5	8.1	
Մարտ	5.8	7.4	5.4	
Ապրիլ	6.2	8.4	3.2	
Մայիս	5.9	9.0	1.3	
Հունիս	6.5	10.3	-0.5	
Հուլիս	8.2	9.3	-0.1	
Օգոստոս	8.8	9.1	-0.2	
Սեպտեմբեր	8.9	9.9	0.1	
Հոկտեմբեր	9.1	9.5	0.1	
Նոյեմբեր	9.6	8.8	-0.5	
Դեկտեմբեր	7.7	8.3	-0.6	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ⁵

Անվանում	2024 թ. հունվարը 2023 թ. հունվարի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տրոկոսային կետ)
Գնաճ	-0.9	
Մներամբերը և ոչ ակտիվային խմիչք	-5.8	-2.38
Ակտիվային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	7.4	0.32
Հագուստ և կոշիկ	1.9	0.06
Բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.8	0.12
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	0.5	0.02
Առողջապահություն	1.7	0.16
Տրանսպորտ	9.2	0.72
Կապ	-0.5	-0.02
Հանգիստ և մշակույթ	1.3	0.01
Կրթություն	4.8	0.10
Ռեստորաններ և հյուրանոցներ	3.7	0.08
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	0.0	0.00

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ 5,6

Ժամանակաշրջան	2021	2022	2023	2024
<i>նախորդ ամսվա նկատմամբ (%)</i>				
Հունվար	0.7	0.3	0.2	0.0
Փետրվար	0.8	0.6	0.1	
Մարտ	0.8	1.1	-0.1	
Ապրիլ	0.6	1.3	0.0	
Մայիս	0.4	0.7	-0.1	
Հունիս	0.3	1.0	-0.2	
Հուլիս	0.3	0.7	0.0	
Օգոստոս	0.3	0.4	0.2	
Սեպտեմբեր	0.3	0.7	0.2	
Հոկտեմբեր	0.4	0.3	0.4	
Նոյեմբեր	0.6	0.3	0.1	
Դեկտեմբեր	0.5	0.4	0.1	
<i>նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)</i>				
Հունվար	3.0	5.8	7.9	0.5
Փետրվար	3.7	5.6	7.3	
Մարտ	4.6	5.9	6.0	
Ապրիլ	4.6	6.6	4.6	
Մայիս	5.1	7.0	3.8	
Հունիս	5.5	7.8	2.5	
Հուլիս	5.9	8.3	1.7	
Օգոստոս	6.1	8.3	1.5	
Սեպտեմբեր	6.1	8.7	1.1	
Հոկտեմբեր	6.2	8.6	1.2	
Նոյեմբեր	6.6	8.2	1.0	
Դեկտեմբեր	6.2	8.1	0.7	



**ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱԾԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ
ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ^{5,6}**

Անվանում	2024 թ. հունվարը 2023 թ. հունվարի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ, այդ թվում՝	0.5	
Օդային տրանսպորտի միջազգային չվերթեր իրականացնող ծառայություններ (Ծ)	19.9	0.44
Բենզին (Կ)	38.4	0.28
Ծխազվանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության (Կ)	14.0	0.19
Վիրահատական ծառայություններ (Ծ)	5.4	0.12
Բանկերի, փոստային բաժանմունքների կողմից իրականացվող այլ ծառայություններ (Ծ)	37.0	0.10
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար (Ծ)	4.7	0.09
Ակնաբույժի ծառայություններ (Ծ)	13.1	0.08
Օդի՝ այլ երկրների արտադրության (Կ)	14.6	0.08
Սրտանոթային դեղամիջոցներ (Կ)	-9.2	-0.12
Բուսական այլ յուղ կամ ճարպ «Ռեդի» (Կ)	-36.1	-0.15
Գազ՝ փոխադրամիջոցների լիցքավորման համար (Կ)	-4.2	-0.16
Պանիր՝ կովի կաթից (Կ)	-10.1	-0.16
Ալյուր ցորենի՝ բարձր տեսակի (Կ)	-19.7	-0.18
Բուսական յուղ՝ արևածաղկի (Կ)	-31.0	-0.39
Հաց ցորենի՝ բարձր տեսակի (Կ)	-8.3	-0.39

¹ Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ սույն ցուցանիշների աճի տեմպերի բացակայությունը բացատրվում է այն հանգամանքով, որ 2023 թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշները համադրելի չեն նախորդ տարվա նույնամասն ցուցանիշների հետ՝ պայմանավորված 2022 թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշներում էլեկտրաէներգիայի փոխհոսքերի մասով ինքնավար արտադրողների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի ծավալների բացակայությամբ:

² Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայած տվյալների հիման վրա:

³ Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

⁴ Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի x-13Arima -seats մեթոդով կատարված հաշվարկների:

⁵ Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

⁶ Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2023 թ. հունվար - դեկտեմբեր (մյն ԱՄՆ դոլար)	2023 թ. հունվար - դեկտեմբերը 2022 թ. հունվար - դեկտեմբերի նկատմամբ (%)	2024 թ. հունվար (մյն ԱՄՆ դոլար)	2024 թ. հունվարը 2023 թ. հունվարի նկատմամբ (%)
Արտահանում (ՖՕՔ)	8415.2	155.3	934.1	2.1 անգամ
Ներմուծում (ՄԻՖ)	12308.0	140.2	1211.6	161.4
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	3892.8	116.0	277.5	92.1

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈՆԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2023					
	հունվար			հունվար - դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	281209	27025	254183	3945873	641428	3304445
ԱՄՆ	40283	29682	10601	663251	465051	198199
Ուկրաինա	55	1406	-1352	1164	15630	-14466
Ղազախստան	2722	545	2177	43634	25122	18511
Գերմանիա	5120	10506	-5387	102759	125470	-22711
Իսպանիա	1278	7897	-6619	23009	132499	-109490
Ֆրանսիա	3440	3298	142	53365	81683	-28318
ԱՄԷ	2801	41485	-38684	74442	571014	-496572
Չինաստան	203	4083	-3880	5374	86059	-80685
Թուրքիա	552	1182	-630	3401	16363	-12962
Այլ երկրներ	48423	88783	-40360	779254	1880494	-1101240
ԸՆդամենը	386085	215893	170192	5695527	4040814	1654713

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2024		
	հունվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	234180	39874	194306
ԱՄՆ	45160	41855	3305
Ուկրաինա	3	733	-730
Ղազախստան	3118	1258	1861
Գերմանիա	6461	6691	-230
Իսպանիա	1420	8205	-6785
Ֆրանսիա	7157	5377	1780
ԱՄԷ	2907	51795	-48888
Չինաստան	971	6572	-5601
Թուրքիա	294	427	-133
Այլ երկրներ	59066	165128	-106062
ԸՆդամենը	360738	327915	32823


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ


Երկիր	2023					
	հունվար			հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	111380	10697	100683	1549096	251010	1298087
ԱՄՆ	15940	11749	4191	260364	182700	77664
Ուկրաինա	22	557	-535	464	6126	-5662
Ղազախստան	1077	216	862	17137	9955	7182
Գերմանիա	2026	4160	-2134	40228	49177	-8949
Իսպանիա	506	3122	-2616	9022	52031	-43009
Ֆրանսիա	1362	1305	56	20938	31995	-11058
ԱՄԷ	1108	16415	-15307	29124	224504	-195380
Չինաստան	80	1616	-1535	2106	33706	-31600
Թուրքիա	218	468	-249	1333	6413	-5080
Այլ երկրներ	19165	35151	-15986	306131	739545	-433414
Ընդամենը	152884	85455	67429	2235942	1587163	648779

մլն ՀՀ դրամ

Երկիր	2024		
	հունվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	94820	16134	78686
ԱՄՆ	18288	16949	1339
Ուկրաինա	1	297	-295
Ղազախստան	1263	509	754
Գերմանիա	2617	2708	-92
Իսպանիա	575	3323	-2748
Ֆրանսիա	2899	2176	723
ԱՄԷ	1177	20973	-19796
Չինաստան	393	2661	-2268
Թուրքիա	119	173	-54
Այլ երկրներ	23915	66867	-42952
Ընդամենը	146067	132771	13296



Փոխանցումների արտահոսքի դինամիկան



ԻՐԱՎԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒՍԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) ^{1,2,3,4}

2023 ⁵	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	231.9	238.7	244.1	245.9	241.3	242.4	244.6	249.2	252.4	242.6	236.9	235.4
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	298.6	309.0	318.4	323.8	324.5	332.4	341.1	349.6	353.3	340.7	332.4	329.0
2024	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	251.7											
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (2010=100)	348.4											

¹ 2023 թվականին իրականացվել են արդյունավետ փոխարժեքի հաշվարկման մեթոդաբանական փոփոխություններ: Մասնավորապես՝ 5 փարվա ամրագրված միջինները փոխարինվել են 3 փարվա սահող միջիններով: 2023 թվականի համար արդյունավետ փոխարժեքի հաշվարկման մեջ օգտագործվել են 2020-2022 թթ. արտաքին առևտրաշրջանառության տվյալների հիման վրա հաշվարկված միջին կշիռները:

² Հաշվարկի մեջ ընդգրկվել են ՀՀ ամբողջ արտաքին առևտրաշրջանառության առնվազն 85% ծածկույթ ապահովող երկրների տվյալները: Հաշվարկներում ներառված չէ ոչ առևտրային բնույթի և պատվիրատուի հումքով կապարվող առևտրաշրջանառությունը, ինչպես նաև ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալները՝ պայմանավորված ըստ երկրների տվյալների բացակայությամբ:

³ Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ՀՀ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

⁴ Ինդեքսի աճը նշանակում է արժևորում:

⁵ 2024 թ. սկզբին շարքերը վերանայվել են՝ պայմանավորված գործընկեր երկրների տվյալների վերանայմամբ:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2023	2024
	դ. ³	<
Համախառն միջազգային պահուստներ	3601.9	3575.5
Ոսկի	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	0.5	57.7
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.2	0.2
Արտարժույթ ¹	3601.2	3517.6

¹ Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

² Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

³ Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ¹


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2023	2024
	դ. ³	Հ
Համախառն արդաքին պարտավորություններ	846.1	833.1
ԱՄՀ վարկ	75.9	75.6
ՀՓԻ տեղաբաշխում	285.6	284.2
Այլ վարկեր	478.7	468.6
Այլ պարտավորություններ	5.9	4.7

¹ Ընդգրկված են փոխարկելի արդարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:

² Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

³ Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ՝ ԾԻԳ-երի միջոցները)	
2023			
Դեկտեմբեր	9291	392074	-382783
2024			
Հունվար	9427	499321	-489894

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա ¹ (մլն ՀՀ դրամ)	Շրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 ² (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 ³ (մլն ՀՀ դրամ)	Լյուտարժույթով ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X ⁴ (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմարկիչ ⁵	Դրամային բազմարկիչ ⁶
2023										
Դեկտեմբեր	1845623	778133	1271860	2049993	1360113	3410106	1771812	5181918	2.81	2.53
2024										
Հունվար	1679946	737963	1177029	1914993	1388682	3303675	1762411	5066086	3.02	2.81

¹ Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվներ (դրամով և արտարժույթով):





² M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:

³ M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:

⁴ M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:

⁵ Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

⁶ Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:







ՍԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ՝

մյն ՀՀ դրամ

Փամիկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2018					
Հունվար	979345	415749	742041	1339044	2530248
Փետրվար	982291	421536	746042	1350331	2522461
Մարտ	964239	421566	762102	1390609	2548031
Ապրիլ	928281	427511	763710	1385652	2545933
Մայիս	951095	436835	779960	1410690	2569510
Հունիս	995077	444319	794585	1425975	2595024
Հուլիս	1025003	445436	802477	1439525	2617524
Օգոստոս	1008834	447737	803487	1446438	2622463
Սեպտեմբեր	1096930	448845	823000	1467769	2653434
Հոկտեմբեր	1065223	451580	831596	1488631	2662390
Նոյեմբեր	1100984	451607	836451	1502084	2692129
Դեկտեմբեր	1085253	443536	820768	1489853	2688462
2019					
Հունվար	1075521	447603	851560	1534218	2719156
Փետրվար	1131112	459568	867305	1555646	2739635
Մարտ	1172536	452565	860575	1580210	2728854
Ապրիլ	1248196	445055	862988	1601023	2807222
Մայիս	1159570	440648	861980	1615797	2837472
Հունիս	1136334	441096	850881	1624987	2829564
Հուլիս	1110149	451216	853851	1636518	2826794
Օգոստոս	1137931	447971	856937	1664217	2858899
Սեպտեմբեր	1115352	454557	871681	1702642	2904158
Հոկտեմբեր	1131367	460372	886501	1734923	2931884
Նոյեմբեր	1083987	462981	902481	1779523	2951907
Դեկտեմբեր	1180568	466386	914720	1817973	2990221
2020					
Հունվար	1221418	474973	928067	1847626	3005066
Փետրվար	1193043	478834	938237	1875267	3035933
Մարտ	1225019	493623	946105	1883562	3051165
Ապրիլ	1263917	511955	973362	1913732	3059889
Մայիս	1281696	517766	995148	1941492	3113208
Հունիս	1259168	506995	1000899	1971540	3131128
Հուլիս	1246278	520680	1022756	2016932	3176545
Օգոստոս	1284779	527206	1045152	2048501	3203145
Սեպտեմբեր	1252869	539467	1071820	2083110	3245165
Հոկտեմբեր	1279281	572927	1079534	2062487	3182358
Նոյեմբեր	1361434	592000	1104831	2068365	3211212
Դեկտեմբեր	1400128	610620	1147969	2094323	3256243

2021						
Հունվար	1395238	617794	1155927	2104515	3283969	
Փետրվար	1476638	625610	1202366	2146987	3357857	
Մարտ	1483354	616438	1209400	2175118	3400968	
Ապրիլ	1467152	603413	1207597	2170341	3430424	
Մայիս	1707357	615690	1226569	2194078	3474092	
Հունիս	1653454	620755	1253829	2252187	3538096	
Հուլիս	1760675	614586	1264249	2276847	3564023	
Օգոստոս	1699880	619570	1264137	2287027	3608848	
Սեպտեմբեր	1676339	605672	1265410	2316040	3614305	
Հոկտեմբեր	1707408	602073	1267903	2335116	3645924	
Նոյեմբեր	1645720	594318	1259003	2349277	3658269	
Դեկտեմբեր	1639923	597386	1273281	2370534	3686339	
2022						
Հունվար	1652185	589906	1287168	2409297	3735798	
Փետրվար	1628810	583838	1281837	2406914	3740954	
Մարտ	1597172	606823	1305262	2435879	3781735	
Ապրիլ	1664713	597765	1333013	2471006	3779139	
Մայիս	1643092	598036	1348832	2474696	3855514	
Հունիս	1666765	607924	1373309	2491138	3865415	
Հուլիս	1699221	601220	1402168	2494501	3917114	
Օգոստոս	1674076	608870	1444376	2529037	3943215	
Սեպտեմբեր	1733715	626017	1472159	2568079	4059177	
Հոկտեմբեր	1728597	624819	1517641	2611771	4117852	
Նոյեմբեր	1641941	636783	1554288	2684451	4246434	
Դեկտեմբեր	1724408	636989	1583152	2698898	4289935	
2023						
Հունվար	1723429	641368	1600721	2738542	4348323	
Փետրվար	1687105	648494	1624505	2781466	4409267	
Մարտ	1739134	654294	1668938	2840957	4477402	
Ապրիլ	1661467	667017	1690297	2882512	4574267	
Մայիս	1645722	680623	1727836	2957670	4610738	
Հունիս	1690889	689052	1761903	3012248	4688205	
Հուլիս	1628390	708009	1785035	3075589	4752497	
Օգոստոս	1621026	713001	1812443	3130456	4828813	
Սեպտեմբեր	1684568	716362	1830190	3159421	4881351	
Հոկտեմբեր	1654522	730549	1852488	3206220	4983728	
Նոյեմբեր	1669690	731922	1884176	3250225	5013004	
Դեկտեմբեր	1658045	740175	1951922	3313383	5051125	
2024						
Հունվար	1680967	748746	1931695	3323486	5066483	

¹ Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված փեսքով, ընդ որում, յուրաքանչյուր փարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ փնդեկագիր» ամենամյա պարբերականի փարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-13-ARIMA հարթեցման եղանակը:



« ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ »

մին ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2023	2024
	Դ ³	Հ
<i>(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)</i>		
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՄՏՆԵՐ¹	1115520	1107091
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	730103	572855
Կառավարություն	-382783	-489894
Բանկեր	663025	607013
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	350370	300000
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	0	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0
Զուտ այլ ակտիվներ	449861	455736
ՓՈՂԻ ԲԱԶԱ	1845623	1679946
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	911455	852071
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	392208	305375
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	493994	502802
Այլ հաշիվներ	47967	19698
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	45985	16460
Այլ հաշիվներ արտարժույթով	1982	3238
<i>(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)</i>		
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՄՏՆԵՐ	-	-8429
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	-157248
Կառավարություն	-	-107111
Բանկեր	-	-56012
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-50370
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	0
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0
Զուտ այլ ակտիվներ	-	5875
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	-165677
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-59384
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-86833
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	8809
Այլ հաշիվներ	-	-28269
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	-29525
Այլ հաշիվներ արտարժույթով	-	1256
<i>(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)</i>		
ՁՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՄՏՆԵՐ	-	-0.8
ՁՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	-21.5
Կառավարություն	-	-28.0
Բանկեր	-	-8.4
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	1.3
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	-9.0
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-6.5
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-22.1
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	1.8
Այլ հաշիվներ	-	-58.9

¹ Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը:

² Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

³ Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մին «Հ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2023	2024
	Դ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	-769330	-756777
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	1100697	1021399
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-1558979	-1470943
Արտաքին պարտավորություններ «Հ դրամով (-)	-311048	-307233
ԶՆԱ	5137966	5073833
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	1438169	1426052
Պահանջներ Կառավարության նկատմամբ	1447707	1435469
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-9538	-9417
Զուտ պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	381387	337776
Պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	1018172	921155
Պարտավորություններ ԿԲ-ի նկատմամբ (-)	-636785	-583379
Տնտեսություն	5004314	5030961
Ձեռնարկություններ	2294823	2277282
Դրամով	900310	908070
Արտարժույթով	1339423	1309287
Արժեթղթեր	55089	59926
Տնային տնտեսություններ	2420241	2451568
Դրամով	2138213	2171781
Արտարժույթով	282028	279787
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	11580	11607
Դրամով	6606	6774
Արտարժույթով	4974	4833
Այլ ֆինանսական կազմակերպություններ	277670	290503
Դրամով	215736	226576
Արտարժույթով	61934	63927
Զուտ այլ ակտիվներ	-1685904	-1720956
Արտաքին ակտիվներ «Հ դրամով	126847	125011
Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով	37277	37069
Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (-)	-29633	-33452
Ներդրումներ փայաբաժիններում	35909	36488
Միջբանկային պահանջներ	146295	141270
Այլ ակտիվներ	420126	409102
Միջբանկային պարտավորություններ (-)	-141295	-141027
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-246908	-250156
Կապիտալ հաշիվներ (-)	-1340264	-1379212
Այլ պարտավորություններ (-)	-694257	-666048
ԱՎԱՆԴՆԵՐ	4368635	4317056
Դրամով ավանդներ	2602896	2562604
Ցպահանջ ավանդներ	1232232	1165995
Ժամկետային ավանդներ	1370664	1396609
Արտարժույթով ավանդներ	1765739	1754452
Ցպահանջ ավանդներ	868601	853453
Ժամկետային ավանդներ	897138	901000

« ՀԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ »

մյն «Հ» դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2023	2024
	Դ	Հ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	-12315	-7756
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	37073	31742
Արտաքին պարտավոր. փոխարկելի արտարժույթով (-)	-36606	-36258
Արտաքին պարտավորություններ «Հ» դրամով (-)	-12782	-3240
ԶՆԱ	51976	48532
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	45102	47452
Պահանջներ Կառավարության նկատմամբ	53115	55350
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-8013	-7898
Զուտ պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	78362	78236
Պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	253312	253489
Պարտավորություններ ավանդային կազմակերպ. նկատմամբ (-)	-174950	-175253
Տնտեսություն	311640	309988
Ձեռնարկություններ	140843	138293
«Հ» դրամով	72921	75248
Արտարժույթով	66260	61379
Արժեթղթեր	1663	1665
Տնային տնտեսություններ	169718	170194
«Հ» դրամով	150672	151690
Արտարժույթով	19046	18504
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	959	1384
«Հ» դրամով	527	963
Արտարժույթով	432	422
Այլ ֆինանսական կազմակերպություններ	119	117
«Հ» դրամով	2	5
Արտարժույթով	117	112
Զուտ այլ ակտիվներ	-383127	-387145
Արտաքին ակտիվներ «Հ» դրամով	200	173
Արտաքին ակտիվներ ոչ փոխարկելի արտարժույթով	14	26
Արտաքին պարտավորություններ ոչ փոխարկելի արտարժույթով (-)	0	0
Ներդրումներ փայաբաժիններում	36437	36492
Պահանջներ վարկային կազմակերպ. նկատմամբ	12109	11937
Այլ ակտիվներ	23527	23575
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ (-)	-11860	-11688
Թողարկված պարտատուներ (-)	-27659	-27904
Կապիտալ հաշիվներ (-)	-384601	-387157
Այլ պարտավորություններ (-)	-31293	-32599
ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	39661	40776
«Հ» դրամով փոխառություններ	22326	22560
Ցպահանջ փոխառություններ	66	66
Ժամկետային փոխառություններ	22260	22494
Արտարժույթով փոխառություններ	17334	18216
Ցպահանջ փոխառություններ	0	0
Ժամկետային փոխառություններ	17334	18216

« ԱՎԱՆ ԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ¹

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2023	2024
	Դ ⁷	Հ
<i>(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)</i>		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ ²	333875	342559
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	4848043	4723528
Կառավարություն	1100488	983610
Տնտեսություն	5212228	5239316
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	2435666	2415575
որից՝ կուտակված տոկոսներ	42413	42844
Տնային տնտեսություններ	2593089	2624897
որից՝ կուտակված տոկոսներ	18902	19779
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	12538	12991
որից՝ կուտակված տոկոսներ	509	544
Այլ ֆինանսական կազմակերպություններ	170934	185853
որից՝ կուտակված տոկոսներ	338	299
Զուտ այլ ակտիվներ	-1464673	-1499399
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ ³	3410106	3303675
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ ⁴	5181918	5066086
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	778133	737963
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով ⁵	1271860	1177029
որից՝ կուտակված տոկոսներ	1933	2048
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	1360113	1388682
որից՝ կուտակված տոկոսներ	36337	37464
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	1771812	1762411
Ցպահանջ ⁵	867870	853761
որից՝ կուտակված տոկոսներ	32	21
Ժամկետային	903942	908650
որից՝ կուտակված տոկոսներ	10605	11310
<i>(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)</i>		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	8684
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	-124515
Կառավարություն	-	-116878
Տնտեսություն	-	27088
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	-	-20091
որից՝ կուտակված տոկոսներ	-	432
Տնային տնտեսություններ	-	31807
որից՝ կուտակված տոկոսներ	-	878
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	453
որից՝ կուտակված տոկոսներ	-	35
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	14918
որից՝ կուտակված տոկոսներ	-	-39
Զուտ այլ ակտիվներ	-	-34726
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	-106431
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	-115831
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-40170
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-94830
որից՝ կուտակված տոկոսներ	-	115
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	28569
որից՝ կուտակված տոկոսներ	-	1127
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	-	-9400
Ցպահանջ	-	-14109
որից՝ կուտակված տոկոսներ	-	-11
Ժամկետային	-	4709
որից՝ կուտակված տոկոսներ	-	705

<i>(տրոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)</i>		
ՋՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	2.6
ՋՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	-2.6
Կառավարություն	-	-10.6
Տնտեսություն	-	0.5
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	-	-0.8
Տնային տնտեսություններ	-	1.2
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	3.6
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	8.7
Ջուտ այլ ակտիվներ	-	-2.4
ԴՐԱՄԱՅԻՆ ՉԱՆԳՎԱԾ	-	-3.1
ՓՈՂԻ ՉԱՆԳՎԱԾ	-	-2.2
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-5.2
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	-7.5
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	-	2.1
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	-	-0.5
Ցպահանջ	-	-1.6
Ժամկետային	-	0.5

¹ Ընդգրկված են ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ցուցանիշները:

² ՉԱՄ-ն ներկայացնում է փոխարկելի արտարժույթով ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը:

³ Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդներն ու փոխառությունները:

⁴ Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդներն ու փոխառությունները, արտարժույթային ավանդներն ու փոխառությունները:

⁵ Ներառյալ՝ հաշիվները:

⁶ Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

⁷ Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒՑ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ¹

մլն ՀՀ դրամ

Ցուցանիշներ	2023	2024
	Դ ³	Հ
Կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվներ	1115657	1107238
Համախառն արտաքին ակտիվներ	1458157	1443577
Համախառն արտաքին պարտավորություններ (-)	-342500	-336339
Առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվներ	-634839	-628148
Համախառն արտաքին ակտիվներ	1264821	1183479
Համախառն արտաքին պարտավորություններ (-)	-1899660	-1811628
Վարկային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ	-12102	-7557
Համախառն արտաքին ակտիվներ	37287	31941
Համախառն արտաքին պարտավորություններ (-)	-49388	-39498
Ընդամենը	468716	471533

¹ ՀՀ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվները ներկայացնում են ինչպես փոխարկելի, այնպես էլ ոչ փոխարկելի արտարժույթներով ու դրամով համախառն արտաքին ակտիվների և համախառն արտաքին պարտավորությունների տարբերությունը:

² Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

³ Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ԴՈՒՍՏԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ¹

%

	D1	D2	D3	D4	D5
2023					
Դեկտեմբեր	34.2	40.2	49.8	47.5	33.7
2024					
Հունվար	34.8	40.7	52.2	47.1	32.9

¹ Դուրսայնացման ցուցանիշների հաշվարկում ընդգրկված են ավանդային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներից ներգրավված ավանդներն ու փոխառությունները և փրամադրված վարկերը:

D1-ը ռեզիդենտների արտարժույթային ավանդների ու փոխառությունների և փողի զանգվածի հարաբերակցությունն է:

D2-ը ռեզիդենտների արտարժույթային ավանդների ու փոխառությունների և ռեզիդենտների ընդհանուր ավանդների հարաբերակցությունն է:

D3-ը ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ արտարժույթով ցպահանջ ավանդների ու փոխառությունների կշիռն է ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ցպահանջ ավանդներում ու փոխառություններում:

D4-ը ռեզիդենտ ֆիզիկական անձանց՝ արտարժույթով ժամկետային ավանդների ու փոխառությունների կշիռն է ռեզիդենտ ֆիզիկական անձանց ընդհանուր ժամկետային ավանդներում ու փոխառություններում:

D5-ը ռեզիդենտ իրական հատվածին արտարժույթով փրամադրված վարկերի և ռեզիդենտ իրական հատվածին փրամադրված ընդհանուր վարկերի հարաբերակցությունն է:

ՏՈՎՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ

Ցուցանիշներ	2023	2024
	Դ	Հ
ԱՎԱՆԴՆԵՐ		
Մինչև 1 տարի ժամկետով		
Իրավաբանական անձանց		
ՀՀ դրամով	8.4	7.8
ԱՄՆ դոլարով	3.2	3.4
Ֆիզիկական անձանց		
ՀՀ դրամով	8.0	8.1
ԱՄՆ դոլարով	2.5	2.5
1 տարուց ավելի ժամկետով		
Իրավաբանական անձանց		
ՀՀ դրամով	10.2	10.1
ԱՄՆ դոլարով	3.3	4.3
Ֆիզիկական անձանց		
ՀՀ դրամով	9.7	9.7
ԱՄՆ դոլարով	4.0	4.0
ՎԱՐԿԵՐ		
Մինչև 1 տարի ժամկետով		
Իրավաբանական անձանց		
ՀՀ դրամով	11.5	11.2
ԱՄՆ դոլարով	7.8	6.8
Ֆիզիկական անձանց ¹		
ՀՀ դրամով	15.2	15.7
ԱՄՆ դոլարով	7.1	9.0
1 տարուց ավելի ժամկետով		
Իրավաբանական անձանց		
ՀՀ դրամով	12.1	12.4
ԱՄՆ դոլարով	8.6	8.7
Ֆիզիկական անձանց ¹		
ՀՀ դրամով	16.0	16.0
ԱՄՆ դոլարով	11.5	11.7
Ֆիզիկական անձանց հիպոտեկային վարկեր		
ՀՀ դրամով	12.5	12.7
ԱՄՆ դոլարով	9.8	10.2
Սպառողական վարկեր		
ՀՀ դրամով	16.8	16.5
ԱՄՆ դոլարով	11.1	11.3
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված պարտավորումների եկամտաբերությունը ^{2,3}	-	-
Պետական կարճաժամկետ պարտավորումների եկամտաբերությունը ³	10.6	10.6
Պետական միջնաժամկետ պարտավորումների եկամտաբերությունը ³	10.9	-
Պետական երկարաժամկետ պարտավորումների եկամտաբերությունը ³	-	11.0

¹ Ներառում է ֆիզիկական անձանց հիպոտեկային, սպառողական և այլ վարկերի փոկոսադրույքները, ինչպես նաև ֆիզիկական անձ փոխտեսակառոջ սուբյեկտներին փորձադրված վարկերի փոկոսադրույքները:

² Ներառված են բոլոր ժամկետայնության արժեթղթերը:

³ Ներկայացված են առաջնային շուկայում փեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունները:

ԲԱՆԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԸ

Ժամանակաշրջան	Բանկային տոկոս
03.12.2002-03.02.2003	19.0
04.02.2003-30.03.2003	18.0
31.03.2003-05.05.2003	19.0
06.05.2003-12.06.2003	18.0
13.06.2003-29.06.2003	17.0
30.06.2003-02.11.2003	18.0
03.11.2003-08.12.2003	17.0
09.12.2003-02.02.2004	18.0
03.02.2004-03.03.2004	17.0
04.03.2004-04.05.2004	18.0
05.05.2004-03.06.2004	17.0
04.06.2004-02.11.2004	16.0
03.11.2004-07.12.2004	15.0
08.12.2004-02.05.2005	16.0
03.05.2005-27.06.2005	17.0
28.06.2005-07.08.2005	18.0
08.08.2005-31.10.2005	17.0
01.11.2005-08.03.2006	16.0
09.03.2006-05.07.2006	15.0
06.07.2006-31.07.2006	14.0
01.08.2006-28.08.2006	15.0
29.08.2006-02.11.2006	14.0
03.11.2006-28.12.2006	13.0
29.12.2006-28.02.2007	14.0
01.03.2007-01.07.2007	13.0
02.07.2007-02.12.2007	12.0
03.12.2007-06.10.2008	11.0
07.10.2008-20.01.2010	12.0
21.01.2010-08.11.2010	13.0
09.11.2010-	12.0

**ՀՀ ԿԲ-ի ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ**

%

Գործողության ժամկետ	Վերաֆինանսավորման տոկոսադրույք	Ներգրավված միջոցներ	Լոմբարդային ռեպո
11.12.2019-27.01.2020	5.50	4.00	7.00
29.01.2020-17.03.2020	5.50	4.00	7.00
18.03.2020-28.04.2020	5.25	3.75	6.75
29.04.2020-16.06.2020	5.00	3.50	6.50
17.06.2020-28.07.2020	4.50	3.00	6.00
29.07.2020-15.09.2020	4.50	3.00	6.00
16.09.2020-27.10.2020	4.25	2.75	5.75
28.10.2020-15.12.2020	4.25	2.75	5.75
16.12.2020-02.02.2021	5.25	3.75	6.75
03.02.2021-16.03.2021	5.50	4.00	7.00
17.03.2021-04.05.2021	5.50	4.00	7.00
05.05.2021-15.06.2021	6.00	4.50	7.50
16.06.2021-03.08.2021	6.50	5.00	8.00
04.08.2021-14.09.2021	7.00	5.50	8.50
15.09.2021-02.11.2021	7.25	5.75	8.75
03.11.2021-14.12.2021	7.25	5.75	8.75
15.12.2021-01.02.2022	7.75	6.25	9.25
02.02.2022-15.03.2022	8.00	6.50	9.50
16.03.2022-03.05.2022	9.25	7.75	10.75
04.05.2022-14.06.2022	9.25	7.75	10.75
15.06.2022-02.08.2022	9.25	7.75	10.75
03.08.2022-13.09.2022	9.50	8.00	11.00
14.09.2022-01.11.2022	10.00	8.50	11.50
02.11.2022-13.12.2022	10.50	9.00	12.00
14.12.2022-31.01.2023	10.75	9.25	12.25
01.02.2023-14.03.2023	10.75	9.25	12.25
15.03.2023-02.05.2023	10.75	9.25	12.25
03.05.2023-13.06.2023	10.75	9.25	12.25
14.06.2023-01.08.2023	10.50	9.00	12.00
02.08.2023-12.09.2023	10.25	8.75	11.75
13.09.2023-31.10.2023	9.75	8.25	11.25
01.11.2023-12.12.2023	9.50	8.00	11.00
13.12.2023-30.01.2023	9.25	7.75	10.75
31.01.2024-	8.75	7.25	10.25

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀՀ ԿՐ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԿԱԼԸ

մին ՀՀ դրամ

Ժամկետ	Հիմնական ռեպորտ	Կատուցվածքային ռեպորտ	Ճշգրտող ռեպորտ	Հավարտիչ ռեպորտ համաձայնագրեր	Դրամական միջոցների ներգրավում	Դրամական միջոցների ներգրավման սակավություններ	Լոնքարդային ռեպորտ	Պետական պարտատուների առք	Պետական պարտ. վճարող
2024									
Հունվար	1460000	-	55000	-	199600	-	-	-	-

¹ Մարումները հանված չեն:

ՌԵՊՈ ՇՈՒԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ¹

Ցուցանիշներ	մինչև 7 օր		8 - 14 օր		15 - 28 օր		29 օր և ավելի		ընդամենը		որից՝ միջբանկային գործարքներ	
	մին դրամ	%	մին դրամ	%	մին դրամ	%	մին դրամ	%	մին դրամ	%	մին դրամ	%
2024												
Հունվար	312071	9.69	367348	9.75	36760	9.78	1371	9.98	717549	9.73	261060	9.39
Առավելագույն տոկոսադրույք		10.35		10.35		11.05		11.05		11.05		9.55
Նվազագույն տոկոսադրույք		9.00		9.00		9.00		9.95		9.00		9.00
Ստանդարտ շեղում		0.27		0.22		0.35		0.40		0.28		0.21

¹ Չի ներառում ռեպորտ շուկայում ՀՀ ԿՐ գործառնությունները:

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿՈՐՄԻՑ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՆԵՐԳՐԱՎԿԱԾ
ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ՈՒ
ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ (ՀՈՒՆՎԱՐ, 2024)**

հազար միավոր

Ցուցանիշներ	Մինչև 15 օր					16-30 օր					31-60 օր				
	Ծավալ	Տոկոսադրույքներ				Ծավալ	Տոկոսադրույքներ				Ծավալ	Տոկոսադրույքներ			
		Նվազագույն	Միջին կշռված	Առավելագույն	Ստանդ. շեղում		Նվազագույն	Միջին կշռված	Առավելագույն	Ստանդ. շեղում		Նվազագույն	Միջին կշռված	Առավելագույն	Ստանդ. շեղում
Վարկեր															
Իրավաբանական անձանց															
ՀՀ դրամով	185592	10.0	13.3	17.6	2.2	1874677	13.0	16.3	20.6	1.9	9627614	10.2	10.9	16.5	1.9
ԱՄՆ դոլարով	850	10.0	10.0	10.0	0.0	208	5.3	8.3	16.0	3.8	591	5.3	8.1	13.5	2.5
Եվրոյով	178	2.0	2.0	2.0	0.0	6	12.1	16.6	18.0	3.4	214	7.0	8.8	9.0	1.0
Ֆիզիկական անձանց															
ՀՀ դրամով	158426	8.6	11.8	20.9	3.3	5436186	8.3	15.6	23.0	3.4	1043640	9.0	11.2	19.5	2.6
ԱՄՆ դոլարով	95	10.0	10.6	17.0	3.1	714	7.3	9.4	21.0	3.7	119	7.3	8.0	17.1	3.2
Եվրոյով	1	11.0	12.1	15.0	2.1	256	13.0	14.1	15.9	0.9	13	12.0	12.5	15.0	1.6
Ավանդներ															
Իրավաբանական անձանց															
ՀՀ դրամով	0	0	0	0	0	155000	3.5	4.5	5.7	1.2	3558650	3.0	6.3	10.1	1.7
ԱՄՆ դոլարով	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	4.0	4.0	4.0	0.0
Եվրոյով	193	0.3	0.3	0.3	0.0	74	0.5	0.5	0.5	0.0	0	0	0	0	0
Ֆիզիկական անձանց															
ՀՀ դրամով	127189	7.5	8.3	9.2	0.6	1274186	3.0	6.0	10.1	1.9	10150063	3.0	6.2	8.4	1.2
ԱՄՆ դոլարով	29	0.2	1.5	5.3	1.6	491	0.9	1.4	4.5	1.4	6327	0.2	0.8	4.0	0.8
Եվրոյով	0	0.1	0.1	0.1	0.0	2	0.1	1.3	2.0	1.0	879	0.0	0.3	2.0	0.5

Ցուցանիշներ	61-90 օր					91-180 օր					181 օրից - 1 տարի				
	Ծավալ	Տոկոսադրույքներ				Ծավալ	Տոկոսադրույքներ				Ծավալ	Տոկոսադրույքներ			
		Նվազագույն	Միջին կշռված	Առավելագույն	Ստանդ. շեղում		Նվազագույն	Միջին կշռված	Առավելագույն	Ստանդ. շեղում		Նվազագույն	Միջին կշռված	Առավելագույն	Ստանդ. շեղում
Վարկեր															
Իրավաբանական անձանց															
